ԲԱՐԵՊԱՇՏՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

Խմբագրական Երարատ Ամսագրոյ.

Ասարխանայ հայազգի Այրի կին Եղիսաբէթ Այրապետեան Թամազեանց իւր խնդրագրոյ հետը ի 10 ներկայ ամսոյ առաջարկեց Հոգևոր ծխական երկսեռ դպրոցաց Հոգաբարձութեան մի հարիւր բուբլի արծաթի, և խնդրեց այն գումարը արկանել դրամատուն վասն շահաբերութեան և նորա տոկոսաւք վարժել Օրիորդական Դպրոցի մէջ մի էքաւոր որբ աղջիկ ի յիշատակ հանգուցեալ դստեր իւրոյ Օրիորդի Աննայի Ոսկանեան Թամազեանց։

Հոգաբարձութիւնը համաձայն խնդրոյ նորա տուեց այն գումարը Դրամատուն շահաբերութեան, և նորա տոկոսիքով պահումէ Դպրոցի մէջ մի էքաւոր անհայր աշակերտուհի ուսուցանելով Հայերէն և Ռուսերէն լեզուի աւանդելի առարկաները, և անուանեց այն օրիորդը «Սանուհի Աննայի Ոսկանեան Թամազեանց»։ Այսօրինակ ազգօգուտ նուիրագործութիւնը այրուոյն Թամազեանցի՝ Հոգաբարձական Խորհրդարանը խնդրումէ խոնարհաբար հրատարակել ի գիտութիւն համազգեաց՝ միջոցաւ Երարատ ամսագրոյ։

Հոգաբարձուք Յովսեփ Աւագ քահանայ Բունիաթեանց
Յովհաննէս Սարգսեանց
Սիմէօն Պապովեանց.

Համար 61.

Ի 13 Օքտոմբրի 1874 ամի,
ՅԱսդրախան։

ԱՌ ՄՇԱԿ.

Մշակ լրագրոյդ սովորական եղած նոր ոճով՝ 38րդ թուոյ մէջ ևս մի քանի անհիմն լրոց հետ՝ հրատարակած էիր՝ թէ «Մենք լսումենք որ Էջմիածնի նոր Հեմարանի օծման հանդէսը կկատարվի Սեպտեմբերի 28ին»,, սակայն դու Հայ դոլովդ՝ քեզ գիտել անհրաժեշտ էր և էՙ զի Հայաստանեայց Եկեղեցին օծման հանդէս կըկատարէ Նորակառոյց Եկեղեցեաց համար, իսկ դպրոցաց՝ ինչպէս նաև Հեմարանի համար եղածը՝ օրհնութեան հանդէս է, որ աւելի պարզն ասելով՝ խաչահանդիսով կկատարուի, և օծման և օրհնութեան բառից և արարողութեանց մէջ մեծ տարբերութիւն կայ։ Այս և այլ այսպիսիքը իբրև Հայ քաջ պիտի իմանաս, որպէս զի Խմբագրական պաշտօնավարութեանդ մէջ կամայ կամ ակամայ այսպիսի սխալմանց չենթարկուիս, և այլոց թէթև սխալմունքը կամ օտար ազգաց վերաբերեալ բառից թարգմանութեանց թերութիւնքը ծաղրած ժամանակդ՝ դու աւելի ևս մեծ ծաղու արժանի չլինիս՝ նոյն իսկ քեզ՝ այս ինքն սեպհականուածդ Ազգի վերաբերեալները չիմանալով։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԳ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ.

Պօլսոյ Ազգային լրագիրք աւետեցին Երամեան Վ. սեմ. Աբրահամ Պէյի Մէ-ղէր Փաշայութեան և Վ. Էղիրութեան բարձր աստիճանով պսակուիլը, ընդ որ մեծապէս ուրախ եմք յիշեալ Փաշայի Ազգասիրական գործովք ևս նշանաւոր և բարեհամբաւեալ լինելոյն համար։

Ուստի շնորհաւորելով Նորին Վսեմափայլութեան նորընկալ աստիճանը՝ կը բարեմաղթենք՝ զի Բարձրելոյն քաղցր խնամոց և հովանւոյն ներքև յաւէտ պատըսպարուելով՝ կրկին բարեմասնութեամբք հոգւոյ և մարմնոյ զարդարուի՝ և ևս փառաւոր պատուոց արժանի հանդիսանալով։

Այս առթիւ հետևեալները կ՚քաղենք Պոլսոյ Ազգային լրագիրներէն։

ՎՍԵՄ. ԱԲՐԱՀԱՄ ՓԱՇԱ.

Ոչ — մահմետական ժողովրդոց մէջէն մինչև ցարդ միայն վեց անձինք Վէզիրութեան աստիճանի բարձրացած են։ Եօթներորդը կըլլայ՝ մեր ազգայիններէն ազնուատոհմ, դիւցազնագործ և ազգասէր անձ մը։

Օգոստափառ Սուլթանը՝ որ անխտիր կվարձատրէ և կ՚քաջալերէ երկրին և կառավարութեան օգտակար ու անձնուէր անձինքն՝ յաստիճանէ աստիճան բարձրացունելով զանոնք, — այս անգամ Վէզիրութեան ամենաբարձր աստիճանը շնորհեց Երամեան վսեմափայլ Աբրահամ պէյին, որ արդէն Պալայի աստիճան ունէր և Օսմանիյէ առաջին աստիճանի ականակուռ պատուանշանը կկրէր։

Նորին բարձրութիւնը, ԱԲՐԱՀԱՄ ՓԱՇԱ կիւրակէ օրը Օգոստափառ Սուլթանին ներկայանալով՝ իւր խորին շնորհակալիքը մատոյց կայսերական այս բարձր շնորհաց համար։

Աբրահամ փաշա այսպէս հետզհետէ բարձրանալու արժանի կըլլայ՝ իւր հաւատարիմ ծառայութեանց պատճառաւ, որովք կայսերական կառավարութեան և եգիպտական իշխանութեան յարաբերութիւնք վերջին ժամանակներս առաւել ամրապնդեցան, ուսկից զոհ ըլլալով Եգիպտոսի բարձրապատիւ Խտիվն ալ՝ Պոլսոյ մէջ իւր փոխանորդութեան մեծ պաշտօնն ալ յանձնեց անցեալները Նորին Վսեմութեան։

Այսօր կամ վաղը Պէյդօղլի ապարանաց մէջ հանդիսաւոր կերպով կկարդացուի կայսերական հրովարտակը։

Աբրահամ փաշա, այսպէս պատուոյ՝ փառաց ու պարծանաց պսակ կըլլայ մեր ազգին համար, և իւր բարձրութեան մէջ երբէք չմոռնալով ազգն՝ մեծամեծ շնորհներով կմխիթարէ և կօգնէ, ինչպէս հանրածանօթ է։

Կմաղթենք յամենայն սրտէ, որ Երկինք միշտ հսկէ Նորա վրայ, և նախանձ՝ ատելութիւն ու հակառակութիւն չկրնան մերձենալ ի նա՝ շնորհիւ Նախախնամութեան։

Փունջ թ. 918, Սեպտ. 11։

Մամուլ և հետևեալը կ՚յաւելու։

Քարաքէհեա Աբրահամ պէյ Միշիւրութեան աստիճան բարձրանալով, Աբրահամ փաշա եղաւ։

Շաբաթ օրուընէ ի վեր այս բերկրառիթ լուրը ամեն Հայ կը փսփսար, և ուրախութիւններն կատարեալ ըլլալու համար պաշտօնական հրատարակութեան կսպասէր։

Վեհ. Սուլթանին բարձր համակրանաց և շնորհաց արժանանալով Աբրահամ փաշա, երբ այսպէս դեռ Հայոց մէջ նմանը չտեսնուած աստիճանին հասաւ, հայ արիւն և սիրտ ունեցող ամէն անձ մեծ հաճութիւն և մխիթարութիւն զգաց, և պարծանք ունեցաւ առաջի օտար ազգաց։

Կը մաղթենք որ միշտ այսպէս պայծառ մնայ Վսեմ. Աբրահամ փաշային արևը, որոյ ճառագայթները կը տարածուին արդէն շատ Հայերու վրայ, և պիտի տարածուին նաև ընդհանուր ազգին վրայ առաջուընէ աւելի պայծառ, և այդ մեծ անունը Պէզճեան անմահ բարերարին կարդը դարուց ի դարս կօրհնուի։

Մամուլ թ. 413, Սեպտ. 11։

Իսկ Դիպակ՝ Կայսերական հրովարտակին ընթերցման համար հետևեալը կգրէ։

Վսեմ. Աբրահամ փաշային Վէզիրի ու Միշիրի աստիճան շնորհող կայսերական Մէնշուրին ընթերցման արարողութիւնն Դշ. օր մեծ հանդիսիւ կատարեցաւ Էմիրկէն Խտիվին պալատը։

Ժամ 3 ին Կայսերական զօրաց գումարտակ մը նուագարաններով շարուած էր Խտիվին պալատին առջև։

Աբրահամ փաշա, այսպէս պատուոյ՝ փառաց ու պարծանաց պսակ կըլլայ մեր ազգին համար, և իւր բարձրութեան մէջ երբէք չմոռնալով ազգն՝ մեծամեծ շնորհներով կմխիթարէ և կօգնէ, ինչպէս հանրածանօթ է։

Կմաղթենք յամենայն սրտէ, որ Երկինք միշտ հսկէ Նորա վրայ, և նախանձ՝ ատելութիւն ու հակառակութիւն չկրնան մերձենալ ի նա՝ շնորհիւ Նախախնամութեան։

Փունջ թ. 918, Սեպտ. 11։

Մամուլ և հետևեալը կ՚յաւելու։

Քարաքէհեա Աբրահամ պէյ Միշիւրութեան աստիճան բարձրանալով, Աբրահամ փաշա եղաւ։

Շաբաթ օրուընէ ի վեր այս բերկրառիթ լուրը ամեն Հայ կը փսփսար, և ուրախութիւններն կատարեալ ըլլալու համար պաշտօնական հրատարակութեան կսպասէր։

Վեհ. Սուլթանին բարձր համակրանաց և շնորհաց արժանանալով Աբրահամ փաշա, երբ այսպէս դեռ Հայոց մէջ նմանը չտեսնուած աստիճանին հասաւ, հայ արիւն և սիրտ ունեցող ամէն անձ մեծ հաճութիւն և մխիթարութիւն զգաց, և պարծանք ունեցաւ առաջի օտար ազգաց։

Կը մաղթենք որ միշտ այսպէս պայծառ մնայ Վսեմ. Աբրահամ փաշային արևը, որոյ ճառագայթները կը տարածուին արդէն շատ Հայերու վրայ, և պիտի տարածուին նաև ընդհանուր ազգին վրայ առաջուընէ աւելի պայծառ, և այդ մեծ անունը Պէզճեան անմահ բարերարին կարդը դարուց ի դարս կօրհնուի։

Մամուլ թ. 413, Սեպտ. 11։

Իսկ Դիպակ՝ Կայսերական հրովարտակին ընթերցման համար հետևեալը կգրէ։

Վսեմ. Աբրահամ փաշային Վէզիրի ու Միշիրի աստիճան շնորհող կայսերական Մէնշուրին ընթերցման արարողութիւնն Դշ. օր մեծ հանդիսիւ կատարեցաւ Էմիրկէն Խտիվին պալատը։

Ժամ 3 ին Կայսերական զօրաց գումարտակ մը նուագարաններով շարուած էր Խտիվին պալատին առջև։

Ժամ 5ին Վեհ. Սուլթանին սենեկապետ Թահիր պէյ նաւով Էմիրկէն հասաւ Կայսերական Մէնշուրը ձեռքը, և անմիջապէս զինուորական նուագարաններն հնչել սկսան։

Վսեմ. Արրահան փաշան, շքեղ համազգեստ մը հագած և առաջին Օսմանլիի ժապաւէնն ու Մէճիտիէի պատուանշանը կախած, Արարողապետ Սիրէթ էֆէնտիի առաջնորդութեամբ պալատէն դուրս եկաւ, և ծովեզերքն երթալով Թահիր պէյի ձեռքէն ընդունեց կայսերական Մէնշուրը կանանչ բեհեղի մէջ փակուած, և պալատը վերադառնալով արարողութեան դահլիճն կաւ և Մէնշուրը կայսերական Տիվանին Քիսէտար էֆէնտիին յանձնեց։

Նա ալ կարմիր չուխայով ծածկուած և ծաղիկներով զարդարուած բարձրաւանդակի մը վրայ ելնելով կարդաց։ Սովորական աղօթքներն ու բարեմաղթութիւնները կատարուելէ եաև, սենեկապետ Թահիր պէյ և հոն ներկայ գտնուող բարձրատիճան անձինք իրենց շնորհաւորութիւնները մատուցին Վսեմ. Արրահամ փաշային։

Այս հանդէսը կատարուելէ զկնի, Արրահամ փաշան անմիջապէս Ջրագանի պալատը գնաց, և Վեհ. Սուլթանին ներկայացաւ իւր շնորհակալութեան յարգանքը մատուցանելու։

Դիտակ Թիւ 116 Սեպտ. 14։

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ։

Պատմական ազգի մը համար, ինչպէս է Հայոց ազգը, թանկագին գանձեր են այն ամեն յիշատակարանք, արձանագիրք, մատեանք և այլք, որք հետզհետէ երևան ելնելով նոր լոյս կը սփռեն իր պատմութեան վրայ, կամ անոր թերի կամ անյիշատակ մնացած մասերը կամբողջացնեն։

Այսպիսի պատմական գանձ մ՚ երևան եկած է այս օրերս շնորհիւ բազմահմուտ Տոքթոր Մորթման Հայասէր Գերմանացի հնագէտին։

Բարեբաղդ առիթով մը, Մահմէտականութեան սկիզբէն մինչև այսօր եկած գացած բոլոր Արաբացի Պարսիկ և Թիւրք պատմագրաց գործերը ձեռք անցուցեալով, անոնց մէջ Հայաստանի և անոր սահմանակից Վրաստանի, Ատրպատականի, Քիւրդստանի, Միջագետաց, Կապադովկիոյ և Պոնտոսի պատմութեան վրայ շատ մը կարևոր տեղեկութիւններ գտած է, որոց ամենամեծ մասը բնաւ յիշատակուած չեն Հայ պատմագիրներէ, և մեկ փոքր մասն ալ խիստ թերի կամ տարբեր կերպիւ յիշուած են։

Տոքթոր Մորթման իւր այս պատուական գիւտը մեզ յայտնելով՝ խմացուց որ ինքը պատրաստ է Հայոց պատմութեան վերաբերեալ մասերն ազգին հաղորդել տպագրութեամբ, եթէ Հայերէն լեզուաւ թարգմանուին և տպագրեալ օրինակներն ալ տեսը առ տեսը գնող քանի մը հարիւր բաժանորդք գտնուին։

Բոլոր գործը 10 կամ 12 տետր կրնայ ըլլալ, իւրաքանչիւրը 60 կամ 80 երես, ոք մեկտեղ կապուելով՝ 800—1000 երեսէ բաղկացեալ միահատոր կամ 400—500 ական երեսէ բաղկացեալ երկհատոր գիրք մը կրնան կազմել։

Տոքթոր Մորթման այս կարևոր գործին մէջ մեր աջակցութիւնը խնդրելով, յանձն առնք Հայերէն թարգմանութիւնը *) մեք ընել և մասն առ մասն լրագրոյս մէջ հրատարակելէ եաև, 500 օրինակ ալ զատ տպելով իրեն յանձնել, որպէս զի տեսը առ տեսը վաճառուին։

Այս կարգադրութեամբ գալ շաբթու հրատարակել պիտի սկսինք Հայերէն թարգմանութիւնը։

Մասիս Թ. 1558։

Ի ԽԱՐԲԵՐԴԷ.

Խարբերդէն մեզ կը գրեն թէ՝ տեղւոյն Առաջնորդական տեղապահ գեր. Պետրոս վարդապետ Սորսորի վանուց մէջ՝ որ ընդ իշխանութեամբ առաջնորդի է, գիշերօթիկ դպրոց մը բացեր և նոյն վանուց մէջ մասուլ հաստատելու համար Ս. Պատրիարքէն արտօնագիր խնդրեր է։

Մեք ևս խոնարհաբար կը խնդրեմք Ամեն. Ս. Պատրիարքէն որ գեր. Սարգիս վարդապետի սահմանադրական ջանքը պսակելու համար մամլոյ հաստատութեան արտօնագիր առնուլ բարեհաճի Բ. Դրնէն, որպէս զի յիշեալ վանքը ազգին օգտակար և արդիւնաւոր վիճակ մ՚ ունենայ։

Հայրենիք Թ. 217, Սեպտ. 19։

(*) Տոքթոր Մորթման Գալղիերէնի պիտի վերածէ. մեք ալ Հայերենի։